Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-ԼՎ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Վանաձոր) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/23-ԼՎ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 03.01.2023 - 31.12.2023 |
| Ներկայացման օր | 09.01.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Հովսեփյան, ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| Ծրագրի շրջանակներում «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ը պլանավորել էր իրականացնել հետևյալ գործողությունները.<br>• Շահառուների կարիքի խորքային գնահատում և կիսամյակային վերագնահատում<br>• Ըստ կարիքի գնահատման՝ անհատական սոցիալական ծրագրերի կազմում<br>• Կենցաղային սպասարկում<br>• Բժշկական օգնություն և սպասարկում<br>• Սոցիալ-հոգեբանական օգնություն և խորհրդատվություն<br>• Մշակութային միջոցառումների կազմակերպում<br>• Սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում<br>• Կոմունալ վարձավճարների փոխհատուցում: |

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում ծառայություններ են մատուցվել ընդհանուր առմամբ 55 շահառուի: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են բոլոր շահառուների.

- կարիքի խորքային գնահատում
- անհատական սոցիալական ծրագրերի կազմում
- ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում:

Տնային խնամք ծրագրում ներգրավված շահառուներին ծառայությունների մատուցումն իրականացվել է՝ ըստ վերջիններիս հետ կնքված պայմանագրի, ծառայությունների մատուցման ժամանակացույցի, կարիքի գնահատման արդյունքների և անհատական սոցիալական ծրագրի:

Մասնավորապես մատուցվել են հետևյալ ծառայությունները՝

**Կենցաղային սպասարկում**

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում սոցիալական խնամողները կատարել են տնային այցելություններ՝ ըստ պետական չափորոշիչների: Ա խմբի 5 շահառուներին կատարվել է օրական 2-ական այց, իսկ Բ խմբի 50 շահառուներին՝ շաբաթական 2-ական այց:

Սոցիալական խնամողների կողմից մատուցվել են հետևյալ ծառայությունները՝ անձնական հիգիենայի պահպանում, սննդի պատրաստում, կերակրում, բնակարանի հարդարում, գնումներ, մարմնի ամբողջական կամ մասնակի խնամք, լոգանք, կոմունալ վճարումներ, լվացք, արդուկ, լվացքի տեղափոխում լվացքատուն: Շահառուներին ուղեկցել են խանութ, փոստատուն, դեղատուն, բանկ՝ քարտային թոշակ կանխիկացնելու համար:

Լվացքատունը սպասարկել է այն շահառուներին, ովքեր բնակարաններում չունեն լվացքի մեքենաներ: Լվացքը մաքուր, արդուկված հատկացվել է շահառուներին:

Կենցաղային սպասարկման և սոցիալական խնամքի շնորհիվ բարելավվել է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների, միջնորդական ծառայությունների արդյունքում շահառուներն ապահովվել են անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայութեններով:

**Բժշկական օգնություն և սպասարկում**

Ծրագրի իրականացման ողջ ընթացքում բուժքույրերը կատարել են այցելություններ՝ ըստ պետական չափորոշիչների: Ա խմբի 5 շահառուներին կատարել են շաբաթական 2-ական այց, իսկ Բ խմբի 50 շահառուներին՝ շաբաթական 1-ական այց: Այցելությունների ժամանակ կատարվել են ներարկումներ, վերքերի մշակում, վիրակապում, դեղորայքի հատկացում, արյան մեջ շաքարի մակարդակի, արյան ճնշման, թթվածնի քանակի չափումներ, մշտադիտարկում, դեղորայքի ընդունման վերահսկում, տրամադրվել է խորհրդատվություն: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել թաղամասային բժիշկների հետ, ստացել նրանց խորհրդատվությունը:

Բուժքույրերի կողմից շահառուներին տրամադրվել է այն դեղորայքը, որը պոլիկլիկաներերից չեն կարող ստանալ: Դեղորայքը շահառուին տրամադրվել է միայն բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսով: Բուժքույրերը լիազորված են եղել նաև շահառուի կողմից նրանց հատկացված դեղորայքը պոլիկլինիկայից ստանալու և նրանց փոխանցելու համար:

Տրամադրված առողջապահական ծառայությունների շնորհիվ պահպանվել և բարելավվել շահառուների առողջական վիճակը:

**Ուղեկցման ծառայություններ, սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն**

Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է շահառուի կարիքի գնահատում և

անհատական սոցիալական ծրագրի կազմում, ինչպես նաև ուղղորդում և ուղեկցում տարբեր կառույցներ: Սոցիալական աշխատողի կողմից շահառուներին տրամադրվել է սոցիալական խորհրդատվություն/շահերի պաշտպանություն, միջնորդում, ուղղորդում այլ կառույցներ և այլն: Սոցիալական աշխատողը աջակցել է նաև շահառուների սոցիալական խնդիրների լուծմանը՝ տարատեսակ փաստաթղթերի, սոցիալական ապահովության խնդիրների լուծման հարցերում:

Հունվար-դեկտեմբեր ամիսներին սոցիալական աշխատողի կողմից կատարվել է թվով 20 շահառուների փաստագրում անապահովության գնահատման համակարգում, իսկ այն քաղաքացիներն, ովքեր ինքնուրույն կարողանում են փաստագրվել՝ ուղղորդվել են ՄՍԾ Վանաձորի կենտրոն:
Սոցիալական աշխատողի կողմից կատարվել է 1 շահառուի ստորին վերջույթի պրոթեզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմում, համապատասխան կառույցների հետ աշխատանք, ինչպես նաև հաշմանդամության խմբի փոփոխություն՝ 3-րդից 2-րդ խումբ: Համապատասխան աշխատանքի արդյունքում վերոնշյալ շահառուին պետության կողմից հատկացվել է սայլակ, լոգանքի աթոռ, զույգ հենակներ, կատարվել է պրոթեզավորում:
Կիսամյակը մեկ անգամ իրականացվել է նաև շահառուների կարիքի **վերագնահատում և մատուցվող ծառայություններից բավարարվածության չափում**: Վերագնահատման արդյունքում փոփոխություններ են իրականացվել անհատական սոցիալական ծրագրերում: Իսկ բավարարվածության գնահատման արդյունքները ցույց են տվել, որ շահառուները գոհ են աշխատակիցների այցերի հաճախականությունից: Աշխատակիցները բարեխղճորեն են կատարում իրենց աշխատանքային պարտականությունները: Այցերը կատարում են ըստ ժամանակացույցի, կարիքի դեպքում՝ նաև արտահերթ: Շահառուները գոհ են աշխատակիցների խնամքից, ուշադրությունից, հոգատար վերաբերմունքից, ցուցաբերվող հարգանքից:

**Մշակութային միջոցառման կազմակերպում**

Շահառուների հասարակական կյանքը ակտիվացնելու նպատակով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ.

- Սուրբ Սարգիսի տոնի կապակցությամբ շահառու տատիկների կողմի աղաբլիթների պատրաստում և բաշխում երիտասարդներին:
- Հանդիպում հայ ազգային տարազների վարպետ, տիկնիկագործ, բանաստեղծուհի Մարտուհի Սարգսյանի հետ:
- Այցելություն Մեծ Հայրենականի հաղթանակին նվիրված հուշակոթող:
- Նվերների հատկացում տարեցների միջազգային օրվա կապակցությամբ:
- Խոհարարական աշխատարանի կազմակերպում, խոհարարական գիտելիքների փոխանցում երիտասարդներին:
- Խոհարական վարպետության դասի կազմակերպում ծրագրի շահառուների և Արցախից տեղահանված տարեցների համար:

Տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումների արդյունքնում նվազել է տարեցների մեկուսացվածությունը, նրանք որոշ չափով ինտեգրվել են հասարակության մեջ:

**Սննդի, անկողնային պարագաների հատկացում**

Հաշվետու տարվա ընթացքում շահառուներին հատկացվել են չոր սննդի տարողունակ փաթեթներ: Շահառուներին հատկացվել է նաև անկողնային պարագաներ, սրբիչներ, գիշերազգեստներ: Արդյունքում մեղմվել է շահառուների սոցիալական կարիքը:

Տարեցների բնակարանների ջեռուցում և նրանց համար տաք ձմեռ ապահովելու նպատակով իրականացվել է կոմունալ վարձավճարների փոխհատուցում՝ ձմռան ամիսներին:

Յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են անցնող շաբաթվա կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Սուրբ Սարգիսի տոնին նվիրված նախաձեռնություն-
https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/2420034704817972

Առաջին օգնության դասընթաց անձնակազմի համար –
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0nzUKvSP6Luwnkk9iPomRzp11DkzA2FiL5U5dDiin2MdDfTo4NfZBj4KF34z68T4Hl

Վանաձորի պետական բժշկական քոլեջի քույրական գործ բաժնի ուսանողների վկայականների հանձնում-

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0HrtBRSA3DZgUtTEuEBEVaGtfoRjwsGR88pTFtr53N7suhzS6Ge1ft7tK21GKNJBcl

Տնային խնամք ծրագրի ռազմավարական պլանավորում –
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02HtF5KdS9qKaeB9acRqHc4WW9iDepPKoFab4zr4BGHFaduswLy6jcwT3q1PenCAexl

Հայկական Կարիտասի տարեցների խնամքի ծրագրերի վերաբերյալ ինֆոգրաֆիկա, որոնք իրականացվում են ԱՄՀՆ դրամաշնորհների շրջանակներում
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0PuPXcnDoG8hkCw2HHQiLzyGv1mtQKoLJFYzFjn3baHvcbdYYEPjZWkztXbghUkgGl

Տնային խնամք ծրագրի մասին հաղորդում Հանրային ռադիոյում Տարեցների միջազգային օր՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid034TC3kXiFQGL6pr33UASDaq2yJgaWAyXdyDQ24djDerCRdcc2t9EQSrKYgsai4fEGl

Տարեցների միջազգային օր՝
https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid034TC3kXiFQGL6pr33UASDaq2yJgaWAyXdyDQ24djDerCRdcc2t9EQSrKYgsai4fEGl

| |
|---|
| Բժշկական քոլեջների ուսանողների համար կազմակերպված դասընթացներ՝ https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02z14XkB8CXm1ofS13dVf7Bn8Z861qhDhsttDLchuohA4zgJ7MULVqVBB3dKcX7tY7l<br><br>Այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքի վերաբերյալ հավաքվում և պահպանվում է անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները:<br>Տարվա ընթացքում 4 եռամսյակային հաշվետվություններին կից ներկայացվել են ինֆոգրաֆիկաներ, հաջողության պատմություններ, նկարներ: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Քանի որ շահառուները Ա կամ Բ խմբի են, նրանց հիմնական մասը դժվարությամբ է տեղաշարժվում, հատկապես ձմռան ամիսներին խուսափում են տնից դուրս գալ, այդ իսկ պատճառով կազմակերպված միջոցառումներին քչերն են մասնակցում: Այդուհանդերձ ծրագրային թիմը փորձել է տարեցներին հնարավորինս ներգրավել միջոցառումներին կամ տոնական օրերին լրացուցիչ այցեր կազմակերպել նրանց բնակարաններ: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

| |
|---|
| Ծրագիրն ավարտվել է դեկտեմբերի 31-ին: |

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

**Սեմինարներ, վերապատրաստումներ, հանդիպումներ**

- Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Միասնական Սոցիալական Ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնին կից Վանաձորի համակարգող խորհրդի ամսեկան նիստերին՝ որպես խորհրդի անդամ: Քննարկվել են նպաստառու ընտանիքներին պետության կողմից հատկացվող սոցիալական օժանդակության հետ կապված ընթացիկ հարցեր:
- Ծրագրի բուժքույրերը սոցիալական խնամողների համար կազմակերպել են 1-ին օգնության դասընթաց: Տեսական և գործնական աշխատանքի միջոցով ծրագրի աշխատակազմն ամրապնդել է 1-ին օգնության գիտելիքներն ու հմտությունները՝ մասնավորապես ուշաթափությունների, անկումների, վնասվածքների, այրվածքների դեպքում:
- Ծրագրի բուժքույրերը մասնակցել են Ավստրիական Կարիտասի կողմից կազմակերպած «Պալյատիվ խնամք», «Վերքերի մշակում» թեմաներով դասընթացի:
- Բուժքույրերը մասնակցել են նաև «Խնամքն այրվածքների դեպքում», «Խնամքը սրտամկանի կաթվածից հետո» թեմաներով տեսական և գործնական դասընթացին, որը վարել են ԱՄՆ, Հյուսային Կարոլինա նահանգի Քեմփբել համալսարանի մասնագետները:
- Ծրագրի 2 բուժքույրեր մասնակցել են Հայ օգնության ֆոնդի և Գերիատրիայի և Գերոնտոլոգիայի Հայկական Ասոցիացիայի կողմից կազմակերպված «Գերիատրիա և գերոնտոլոգիա» թեմայով եռօրյա դասընթացին, ստացել ՇՄՁ կրեդիտներ:
- Հունիսի կայացել է Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի Տնային խնամք ծրագրի

ռազմավարական պլանավորման հանդիպում, որին մասնակցել է նաև ԱՍՀՆ Տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Հայկ Հարությունյանը, ներկայացուցիչներ ոլորտի ակտիվ դերակատար գործընկեր կառույցներից:

- Հուլիս 1-2 ծրագրի սոցիալական աշխատողը մասնակցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Word Vision, USAID կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացված սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացին:
- Հոկտեմբերին ծրագրի բուժքույրերը և սոցիալական աշխատողը մասնակցել են «Խնամք խնամողների համար» հոգեբանական դասընթացի:
- Նոյեմբերին Վանաձորի պետական բժշկական քոլեջի քույրական գործ բաժնի ավարտական կուրսի ուսանողների համար ծրագրի բուժքույրերն անց են կացրել «Հիվանդի խնամք» թեմայով 18-ժամյա դասընթաց, ինչն իր մեջ ներառել է ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարապմունքներ: Դասընթացի մասնակիցները հնարավորություն են ստացել շահառուների բնակարաններում անցնել պրակտիկա՝ առավել ամրապնդելու համար ստացած գիտելիքները:
- Դեկտեմբերի 14-15ին իրականացվել է ծրագրային թիմի աշխատանքային հանդիպում, որի ընթացքում աշխատակիցները մասնակցել են «Արդյունավետ հաղորդակցում շահառուների հետ, էթիկա և թիմային աշխատանք», «Ինչպես օգնել առանց վնասվելու. ինքնախնամք և ինքնակարգավորում», «Հանրային կապեր, հաղորդակցում: Հաջողության պատմությունների մշակում» թեմաներով դասընթացների, ամփոփվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները և պլանավորվել առաջիկա անելիքները:

**Շահառուներ****

| N | Անուն, ազգանուն | Բնակության հասցե | Հեռախոս | ՀԾՀ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ռոզա Իվանյան | Վանաձոր, Լենինգրադյան 5/2-1-17 | 077390812 | 7614370015 | |
| 2 | Վարսենիկ Հախվերդյան | Վանաձոր,Գր.Լուսավորիչ 14/47 | 2-12-84, 098366615 | 6714400012 | |
| 3 | Էմմա Եգանյան | Վանաձոր,Նժդեհի 9/23 | 093484555 | 7410410019 | |
| 4 | Ռիմա Մնացականյան | Վանաձոր, Չուխաջյան 20/16 | 2-82-38 | 5309410081 | |
| 5 | Ջեմմա Հովսեփյան | Վանաձոր, Չուխաջյան 6/7 | 4-70-65 | 7410340096 | |
| 6 | Ալինա Աֆրիկյան | Վանաձոր, Համբարձումյան 3/50 | 5-56-49, 093055649 | 6309460080 | |
| 7 | Վերգինե Ոսկանյան | Վանաձոր, Թումայան 11/1 | - | Հրաժարվել է | |
| 8 | Բավական Ոսկանյան | Վանաձոր, Թումայան 11/1 | - | Հրաժարվել է | |
| 9 | Սվետիկ Գրիգորյան | Վանաձոր, Շինարարների 7/9 | 4-82-07 | 6903390022 | |
| 10 | Էլիչկա Վիրաբյան | Վանաձոր, Երևանյան խճ. 147/1-42 | 3-79-06 | 5502355018 | |
| 11 | Ցոլիկ Քոչարյան | Վանաձոր, Չուխաջյան 16/4 | 094 02 92 10, 2-92-10 | 6802400170 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Անժելա Աթաբեկովա | Վանաձոր, Զուխաջյան 46/1 | 098455183 | 5902370027 | |
| 13 | Նինա Հովհաննիսյան | Վանաձոր, Թումանյան 7/43 | 2-54-85 | Հրաժարվել է | |
| 14 | Մարգո Ամիրաղյան | Վանաձոր, Իսահակյան 19/1 | 2-84-48 | 6410340052 | |
| 15 | Վարդուշ Ունանյան | Վանաձոր, Թումանյան 9բ/16 | 2-11-45 | 7103380074 | |
| 16 | Լենա Մուսաեյան | Վանաձոր, Ս-Պետերբուրգի 5/3-7-22 | 099 14 12 88 | 7004470091 | |
| 17 | Սիրան Մկրտչյան | Վանաձոր, Կնունյանց 15 | (099) 94-92-57 | 5505460029 | |
| 18 | Նուբար Յարայան | Վանաձոր, Իսակովի 23 | 055 22 68 84 | 1505370140 | |
| 19 | Սեդա Խաչիկյան | Վանաձոր, Գրիբոյեդովի 6/61 | 07741-68-19 | 7211470356 | |
| 20 | Ալմարա Մուսինյան | Վանաձոր, Վարդանանց 122/24 | 094915774 | 6709460274 | |
| 21 | Ռիմա Վարդանյան | Վանաձոր, Պ.Սևակի 45/49 | 2-87-72 | 5301370057 | |
| 22 | Թամարա Դալլաքյան | Վանաձոր, Աղայան 86/34 | 094 72 57 10 | 7011440135 | |
| 23 | Սեդա Թորոսյան | Վանաձոր, Զ.Անդրանիկ 1 նրբ, 17 | 093653869 | 5103610406 | |
| 24 | Միշա Վարդանյան | Վանաձոր, Զ.Անդրանիկ 1 նրբ, 17 | 094629461 | 2008420238 | |
| 25 | Սոնա Բոնջուկյան | Վանաձոր, Ուսանողական 10/4 | 094525193 | 5107540236 | |
| 26 | Սիրուշ Հակոբյան | Վանաձոր, Բանյոյի 10/7 | 4-67-41 | 5214390289 | |
| 27 | Ալվարդ Սիմոնյան | Վանաձոր, Լուսավորիչ 26/10 | (091) 67-29-44 | 5807490072 | |
| 28 | Բավական Անտոնյան | Վանաձոր, Աղայան 95/16 | 2-77-23 | 6409520026 | |
| 29 | Վլադիմիր Մամույան | Վանաձոր, Շինարարների 8/33 | (091) 62-80-11 | 1909310093 | |
| 30 | Նունիկ Մելիքսեթյան | Վանաձոր, Շինարարների 8/33 | (091) 62-80-11 | 8003350077 | |
| 31 | Դոնարա Մարգարյան | Վանաձոր, Զ.Անդրանիկի 1 նրբ, 3 | - | 7501380023 | |
| 32 | Ջինուշկա Քոթանջյան | Վանաձոր, Աբովյան 4 | - | 7104390154 | |
| 33 | Ռիմա Ղամբարյան | Վանաձոր, Աղայան 6 | 098843515 | 6109270113 | |
| 34 | Ալվարդ Սաֆարյան | Վանաձոր, Դեմիրճյան 5/18 | 077540520 | 7603480019 | |
| 35 | Էմիլյա Վեքիլյան | Վանաձոր, Դպրոցի 6 | 2-16-26, 098122107 | 5102420029 | |
| 36 | Հասմիկ Դժլկյան | Վանաձոր, Իսահակյան 2-րդ նրբ, 5/10 | (077) 92-40-19 | 6404480239 | |
| 37 | Լուսվարդ Գևորգյան | Վանաձոր, Ավետիսյան 55/57-20 | 093809261 | 5112410442 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38 | Լենիկ Մելքոնյան | Վանաձոր, Մոսկովյան 54/1-21 | 095889848 | 5101421626 | |
| 39 | Ալվարդ Քառյան | Վանաձոր, Լացյան փակ 4 | 4-16-69, 094343809 | 5811480024 | |
| 40 | Համայակ Առաքելյան | Վանաձոր, Տավրոս 6 փող, 13 տուն | 055861165 | 1103400010 | |
| 41 | Ալինա Մարկոսյան | Վանաձոր, Երև.խճուղի 72/21 | 093690680 | Հրաժարվել է | |
| 42 | Արաքսի Կասեմյան | Վանաձոր, Նաիրի 5/48 | 098062858 | 7204490010 | |
| 43 | Էմմա Արաբաչյան | Վանաձոր, Աղայան 95/29 | 099177509 | 7910512835 | |
| 44 | Սուսաննա Պողոսյան | Վանաձոր, Գր.Լուսավորիչ 29/4 | 095282851 | 7806510010 | |
| 45 | Աշխեն Գրիգորյան | Վանաձոր, Երևանյան խճ. 217 | 055038094 | 6804620585 | |
| 46 | Կիմա Շամոև | Վանաձոր, Շինարարների 21/34 | 2-72-73, 094 99 72 73 | 8101370048 | |
| 47 | Անժել Ղաբուզյան | Վանաձոր, Շինարարների 8/38 | 094324338 | 5101480029 | |
| 48 | Նազի Շուքիսձե | Վանաձոր, Շինարարների 10/34 | 2-71-13, 077565406 | 7303390014 | |
| 49 | Նադյա Ադամյան | Վանաձոր, Թռատերական 2/1 | 4-58-25 | 7003370034 | |
| 50 | Լեգրան Կարապետյան | Վանաձոր, Աղայան 2ե/20 | 5-24-85 | 2503360173 | |
| 51 | Անգինա Ալավերդյան | Վանաձոր, Աղայան 59/2-22 | 093434691 | 6712500036 | Մահացել է ապրիլին |
| 52 | Նորիկ Ղազազյան | Վանաձոր , Աղայան 86/38 | 098921827 | 2014380392 | Մահացել է հունիսին |
| 53 | Վահագն Մաղաքյան | Վանաձոր, Համբարձումյան 3/50 | 5-56-49, 093055649 | 1805370065 | Մահացել է հուլիսին |
| 54 | Աշոտ Սևոյան | Վանաձոր, Աղայան 86/ 8 | 098717585 | 2909320022 | Նոյեմբերին տղան տեղափոխվել է իր հետ բնակության |
| 55 | Մարիա Պետրոսյան | Վանաձոր, Պարոնյան 11 | 094769389 | 6002370056 | Նոյեմբերին մեկնել է Հայաստանից |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

Ձևաչափ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 (ողջ ծրագրի ընթացքում՝ 55 շահառու) |
| 1.1 | այդ թվում՝ կին | 47 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 52 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա -5<br>Բ - 50 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 55 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 55 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 55 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 50 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 27 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*)<br>• լվացքատան ծառայություն | 21 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան ______________________

«09» հունվար 2023 թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.